ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ
ՆԱԽԱԳԱՀ

Հայաստանի Հանրապետություն 0012, ք. Երևան, Վ.Վաղարշյան 13՝՝, հեռ.՝ (011) 90 00 02

№ 18-1243-25

«14» 04 2025 թ.

Հայաստանի Հանրապետության
ներքին գործերի նախարար
Արփինե Սարգսյանին

Հարգելի՛ տիկին Սարգսյան

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի աշխատակիցների և անձամբ իմ անունից ջերմորեն շնորհավորում եմ Ձեզ և ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության ողջ անձնակազմին մասնագիտական տոնի և ոստիկանության կազմավորման 107-ամյակի առթիվ:

Անցնելով բարեփոխումների շարունակական ճանապարհով և պարբերաբար հաղթահարելով մասնագիտական կայացման նոր նշաձողեր՝ ոստիկանական համակարգի ծառայողներն ամեն անգամ ապացուցում են իրենց հավատարմությունը մարդու և քաղաքացու իրավունքների պաշտպանության ու հասարակական կարգի պահպանման պատասխանատու գործին: Աշխատանքի բերումով հաճախ առերեսվելով տարբեր մարտահրավերների՝ ոստիկանության ծառայողները կարողանում են պատվով հաղթահարել դրանք՝ նույն նվիրումով շարունակելով իրենց ծառայությունը հանուն օրինականության ապահովման ու հասարակության անվտանգության:

Մեծ գնահատանքի է արժանի նաև հանցավորության դեմ պայքարում և, մասնավորապես, կոռուպցիոն դրսևորումներին հակազդելու ուղղությամբ ոստիկանության կողմից տարվող ամենօրյա աշխատանքը, որը երբեմն դուրս է մնում հանրության տեսադաշտից:

Վստահ եմ, որ ոստիկանության ծառայողներն այսուհետ ևս նույն վճռականությամբ և օրենքի գերակայության նկատմամբ պարտքի բարձր զգացումով կշարունակեն իրականացնել իրենց

վստահված խիստ կարևոր առաքելությունը՝ նպաստելով ոստիկանության հանդեպ հասարակության վստահության ամրապնդմանը:

Կրկին շնորհավորելով՝ մաղթում եմ հաջողություն, բարեկեցություն և նորանոր ձեռքբերումներ՝ ի նպաստ մեր ժողովրդի բարօրության և հանուն Հայաստանի Հանրապետության պետականության ամրապնդման գործի:

Հարգանքով՝

Արդարադատության առաջին դասի
խորհրդական **Արթուր Նահապետյան**